ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7—8, 1960 Общественные науки

Գ. Ս. Տիրացյան

ԱՐԻՆ-ԲԵՐԴԻ ՍՅՈՒՆԱԶԱՐԴ ԴԱՀԼԻՃԸ ԵՎ ՍԱՏՐԱՊԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Մոսկվայի Պուշկինի անվան կերպարվեստի Պետական թանգարանի համատեղ արշավախումբը մի քանի տարի է հնագիտական աշխատանքներ է տանում Երևան քաղաքի հարավ-արևելյան ծայրամասում գտնվող Արին-բերդի բլուրում (աշխատանքների ղեկավար, ճարտարապետ՝ Կ. Լ. Հովհաննիսյան, գիտական կոնսուլտանտ՝ Ի. Ի. Պիոտրովսկի)։

Հնագիտական աշխատանքների շնորհիվ պարզվեց, որ բլուրը իրենից ներկայացնում է ն. մ. թ. 8-րդ դարի առաջին կեսին հիմնադրված ուրարտական քաղաք Էրեբունիի միջնաբերդը։ Աշխատանքների ընթացքում բացահայտվեցին բերդի պարսպապատերը, մի շարք շենքերի մնացորդներ, որմնանկարների բազմաթիվ բեկորներ, ուրարտական թագավորների սեպագիր արձանագրություններ և ուրարտական ժամանակի այլ գյուտեր։ Առընթեր ի հայտ են բերվել հնագիտական այնպիսի տվյալներ, որոնք վերաբերում են ավելի ուշ ժամանակաշրջաններին, և որոնք ակնարկում են բերդի հետուրարտական դարաշրջանում գոյություն ունենալու մասին։ Ուրարտական պետության անկմանն հաջորդող դարերում բերդի կյանքը բնութագրող նյութերի շարքում առանձնահատուկ տեղ է գրավում բերդի տերիտորիայում բացված սյունազարդ դահլիճը (նկ. 1)։ Այս հուշարձանը բազմիցս հրատարակված ու նկարագրված է վերը հիշատակված թանգարանի արշավախմբի պետ Ի. Մ. Լոսևայի կողմից[1]։ Այն իրենից ներկայացնում է մի ամբողջական ճարտարապետական կոմպլեքս, որը գրավում է 1715 ք. մ. հսկա տարածություն և տեղադրված է միջնաբերդի արևմտյան մասում՝ պարսպապատին կից։ Նրա գլխավոր սենյակը հանդիսանում է քառանկյունի մի դահլիճ՝ սյուների 30 հիմքերով։ Այդ դահլիճի արևելյան պատում գտնվել է ամբողջ շենքի միակ սրտաքին մուտքը։ Դահլիճի դիմացի պատում գտնվող մուտքը տարել է դեպի արևմտյան մասում գտնվող մի հարևան սենյակ, որը հարել է պարսպապատին։ Սա երկարավուն և նեղ մի սենյակ է (նկ. 1), որը չնայած իր ավերված վիճակին, հետաքրքրություն է ներկայացնում՝ շնորհիվ տեսում գտնված ուրարտական որմնանկարների։ Նրա հարավային մասում տեղադրված է մի ուրիշ ավելի փոքր սենյակ (նկ. 2), որը նույնպես ուժեղ կերպով ավերված է, բայց երևում է՝ որ նախկինում զարդարված է եղել որմնանկարներով։ Տեղ առ

[1] „Раскопки урартской крепости города Ирпуни (Ерепуни) на холме Арин-берд". Советское Востоковедение, 1955, № 3, էջ. 144—150; „Раскопки цитадели урартского города Ирпуни", КСИИМК, вып. 58, 1955, էջ. 45—52; „Новые археологические исследования отряда ГМИИ им. А. С. Пушкина на холме Арин-берд", Советская Археология, 1958, № 2, էջ. 179—195.

տեղ պահպանված պատերը իրենց ներքևի մասում շարված են մշակված քարերից, իսկ վերևի մասում՝ չմշակված աղյուսից (քարե ներքնաշարի բարձրությունն 1,55 մ. է)։ Շենքի անկյունային մասում, որ կազմված է սյունազարդ դահլիճի հարավային և նս. 1, 2 սենյակների արևմտյան պատերից, գտնվել է քառակուսի մի սենյակ՝ մեջտեղում՝ աշտարակաձև շինությամբ (նս. 3)։ Մեզ հասել է աշտարակաձև շինության-զիկկուրատի ներքևի մասը միայն, որը շարված է բավականին մեծ մշակված քարերով։ Այստեղ ևս որմնանկարների հետքեր են հայտնաբերվել։

Նկ. 1. Արին-բերդի սյունազարդ դահլիճը։ Հատակագիծ (ըստ Ի. Մ. Լոսեվայի)։

Առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում, իհարկե, սյունազարդ դահլիճը։ Պեղումների ընթացքում բացվել են դահլիճի ծածկը կրող սյունների հիմքերը։ Սրանք մեծ և հաստ քառանկյունի սալեր են (չափերը 0,70 մ.×0.60 մ.×0,50 մ.), դասավորված իրարից հավասար հեռավորության վրա (4,10 մ.) ու պատերից (3,80 մ.), և կազմում են 5 շարք (արևմուտքից-արևելք), ամեն շարքում 6-ական հիմք։ Սրահի պատերի երկայնքով ներսից ձգվում է ցածր կավակերտ նստարան։

Սրահի հյուսիսային պատը, որն արժանացել է ուսումնասիրողների ուշադրությանը (նկ. 2-րդ), տարբեր շարվածքի հետևանքով բաժանվում է երկու հատակորեն սահմանազատվող մասերի։ Պատի արևմտյան հատվածի ներքնաշարը կազմված է մշակված մեծ վեմերից, որոնց վրա բարձրանում է աղյուսաշարը (բարձրությունը 1,5 մ.)։ Պատի արևելյան հատվածի ներքնաշարը, որը շատ ավելի ցածր է, կազմված է գերազանցորեն հղկված վեմերից — մոխրագույն բազալտ՝ 0,50 մ. բարձրության։ Ներքնաշարից վերև շարունակվող պատը ևս չմշակված աղյուսից է։ Նշված տարբերությունը դրսից ընդգծվել է շենքի ամբողջ շրջագծով մեկ տեղադրված կոնտրֆորսների տարբեր

կատարմամբ: Պատի արևմտյան մասում կան երկու կոնտրֆորսներ, որոնք դուրս են ցցվում 0,50—0,55 մ. և որոնց երկարությունը 4 մետր է:

Արևելյան մասում կա 3 կոնտրֆորս, բայց ավելի փոքր չափերի, ամեն մեկը 2,7 մ. երկարությամբ և իրարից ավելի փոքր հեռավորության վրա: Շարվածքի տարբեր բնույթը, կոնտրֆորսների տարբեր կատարումը մի պատի, և

Նկ. 2. Արին-բերդի սյունազարդ դահլիճի հյուսիսային պատը (ըստ Ի. Մ. Լոսևայի):

դեռ ավելին, մի շենքի սահմաններում հարուցեցին տարբեր հատվածների տարբեր ժամանակներում կառուցված լինելու հարցը: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, հնարավոր եղավ տարբերել երկու շինարարական ժամանակաշրջան: Առաջինին վերաբերում են սրահի արևմտյան փոքր մասը, մինչև սյունների երրորդ շարքը, նո. 1, 2, 3 սենյակները, որոնց պատերը մշակված են սյունաարահի առանձնացված մասի պատերի հետ համանման:

Շինարարական երկրորդ ժամանակաշրջանին է վերաբերում սրահի ամբողջ արևելյան մասը, սյուների երեք շարքով։ Սկզբնական շենքի կառուցման ժամանակի շուրջը վեճեր չեն ծագում։ Նա թվագրվում է ուրարտական ժամանակաշրջանով և ամենայն հավանականությամբ առնչվում է Երևանի քաղաքի և միջնաբերդի հիմնադրի անվան՝ Արգիշտի 1-ի (Ն. մ. թ. 786—750) հետ։ Վիճաբանությունները առաջանում են, երբ հարկ է լինում որոշել լրացուցիչ շինարարական աշխատանքների ժամանակաշրջանը, որոնք հանդիսին քննության առնվող կոմպլեքսի վերջնական ձևավորմանը։ Այդպես օրինակ, կարծիք է հայտնվել այն մասին, որ շենքը վերակառուցվել է ուրարտական ժամանակաշրջանում, նույն Ն. մ. թ. 8-րդ դարում, որի մասին կարծես ակնարկում է շինարարական մյուս արձանագրությունը, որը պատկանում էր Արգիշտի 1-ի հաջորդ Սարդուր 2-ին, և այդ պաճառով Արին-բերդի սյունագարդ դահլիճը դիտվում էր որպես պարսկական ապադանաների նախատիպը։ Սակայն ամբոցի տերիտորիայում կատարված մի քանի հետաքրքիր գյուտերը հնարավորություն են տալիս տարբեր լուծում տալ վերակառուցման թվագրման հարցին։ Այդ նախ և առաջ ոսոմբաձև սլաքի ծայրերն են, առանց սոնակալի, որոնք ըստ Բ. Բ. Պիոտրովսկու, բնորոշ են աքեմենյան ժամանակաշրջանի համար[3]։ Երկրորդ դա օղակներից կազմված երկաթե սանձն է (նկ. 3)։ Ինչպես ցույց է տվել Ի. Մ. Լոսևան, նա թվագրվում է հետուրարտական դարերով (Ն. մ. թ. 6—4-րդ դ. դ.), քանի որ տիպոլոգիապես նա մոտ է Ախալգորիի աքեմենյան ժամանակաշրջանի սանձերին։ Երրորդ հերթին ուշադրության արժանի է անոթի բեկորը, որի կանթի ոճավորումը նման է բադի գլխի և որը, ըստ Ի. Մ. Լոսևայի կարծիքի, եգիպտական ծագում ունի[5] (նկ. 4)։ Հին Իրանի գլխավոր կենտրոնների պեղումների արդյունքների հրապարակումը վկայում է աքեմենյան նյութական կուլտուրայում թռչունի գլխի մոտիվի (բադ և կարապ) լայն տարածման մասին։ Պերսեպոլիսում պեղված քարե անոթների շարքում, որոնց մի մասի վրա կան Քսերքսես 1-ին թա-

Նկ. 3. Երկու սանձ Արին-բերդից (ըստ Ի. Մ. Լոսևայի)։

---

[2] Ի. Մ. Լոսևայի հիշատակված աշխատությունները։

[3] Б. Б. Пиотровский. „Ванское царство". Москва, 1959, էջ. 24.

[4] И. М. Лосева. „Новые археологические исследования...", Советская археология, 1958, № 2, նկ. 9.

[5] Նշվ. աշխ. նկ. 10,4։

գավորի արձանագրությունները, գտնվում են այնպիսիները, որոնց կանթերը բադի կամ կարապի գլխի ձև ունեն[6]։ Սուզայի բարձրաքանդակների վրա պատկերված է մի թաս, որի կանթը վերարտադրված է որպես դեպի հետ նայող բադի գլուխ։ Պերսեպոլիսի բարձրաքանդակների վրա պատկերված են խնկամաններ՝ բադի գլխի նման բռնակներով[8]։ Արին-բերդում կյանքը հետուրարտական ժամանակաշրջանում շարունակվելու մասին են խոսում նաև 1956 թ. հայտնաբերված Միլետ քաղաքի երկու արծաթյա դրամները, որոնք թվագրվում են ն. մ. թ. 5-րդ դարով, բայց ոչ ավելի վաղ, քան 478 թվով[9]։ Այդպիսի դրամներ են գտնվել Պերսեպոլիսում, գանձատան տերիտորիայում[10]։



Նկ. 4. Անոթ Արին-բերդից, կանթը ոճավորված բադի գլխի ձևով (վերականգնված) (ըստ Ի. Մ. Լոսեվայի)։

Վերջապես, կերամիկայի մի որոշ մասը բացահայտորեն հետուրարտական տիպի է։ Հետուրարտական ժամանակագրական կերպար ունեցող իրերի մի ամբողջ խմբի առկայությունը, ինչպես նաև այլ կարգի հանգամանքներ, թույլ

[6] E. Schmidt, Persepolis II, Chicago, 1957. տխտ. 53, նկ. 1, 2, 3, 5.

[7] „A Survey of Persian Art", հտ. 1, նկ. 79; Mémoires de la mission archéologique en Iran, т. XXX. Mission de Susiane, R. de Mecquenem, L. de Breton et M. Rutten, Archéologie Susienne, տխտ. VI, 5.

[8] E. Schmidt, Persepolis I, Chicago, 1953, նկ. 60 C և Persepolis II, տխտ. 69, F.

[9] Մ. Իսրաելյան, «Արին-բերդի susi տաճարը և նրա արձանագրությունները», Տեղեկագիր, 1957, № 9, էջ 94, 104։ Б. Б. Пиотровский. Նշվ. աշխ. էջ. 24.

[10] „Persepolis II", տխտ. 84, № 11.

տվեցին վերանայելու վերակառուցման թվագրման հարցը։ Հայտնի է, որ քննության առնվող շենքի վերջնական ձևավորումը վերագրվում էր Սարգուր 2-ին, որից իսկապես մեզ բերդից հասել է շինարարական մի արձանագրություն։ Բայց նրա մեջ ասված է ցորենի պահեստի կառուցման մասին[11], մի հանգամանք, որ չի կարելի համատեղել սյունասրահի հանդիսավոր բնույթի հետ։ Պետք է նաև հաշվի առնել շարվածքի ակնհայտ տարբերությունները մի պատի սահմաններում, մի հանգամանք, որը թույլ չի տալիս լրացուցիչ աշխատանքները վերագրել սկզբնական շենքի կառուցողի անմիջական հաջորդին։ Նշված տարբերությունները ակնարկում են այն մասին, որ շինարարական երկու ժամանակաշրջանի միջև դարեր են անցել։ Վերջապես որոշ նշանակություն պետք է ունենա ուրարտական ճարտարապետության մեջ հատակագծային նմանօրինակ լուծման բացակայության հանգամանքը[12], և, ընդհակառակը, այդպիսի լուծման լայն տարածումը աքեմենյան ճարտարապետության մեջ։ Հին պարսկական ճարտարապետական հուշարձանների հետ հարևանցիորեն ծանոթանալիս կկարողանանք ավելի ճիշտ իմաստավորել Արին-բերդի սյունազարդ դահլիճը և որոշել նրա հետ կապված ժամանակագրական հարցերը։ Հենց սկզբից պետք է ընդգծել այն մեծ դերը, որը ունեին սյունազարդ դահլիճները աքեմենյան Իրանի ճարտարապետության մեջ։ Այդ նկատվում է հատկապես Պերսեպոլիսում, որը մարմնավորում է աքեմենյան ճարտարապետության սկզբունքները, և որտեղ ճարտարապետական կոմպլեքսների առանձին տարրերն ու բջիջները կազմում են սյունազարդ սրահները[13] (նկ. 5)։ Սյունազարդ դահլիճի շատ վաղ օրինակների կարելի է հանդիպել աքեմենյան մայրաքաղաքում՝ Պասարգադայում։ Նրանք մաս են կազմում տարբեր պալատների[14], որոնց կառուցումը ընդունված է վերագրել Կյուրոս թագավորին (559—530)։ Սյունազարդ դահլիճների համատարած երևան գալը կապված է Դարեհ 1-ի ժամանակաշրջանի հետ՝ սկսած ն. մ. թ. 6-րդ դարի վերջին տասնամյակներից։ Այդ ժամանակ է, որ հիմնադրվեց Պերսեպոլիսը և սկսվեց մի քանի շենքերի կառուցումը (ապադանան, Դարեհի պալատը, այսպես կոչված խորհրդակցությունների դահլիճը և գանձատան առաջին վաթիանտը)[15]։ Շինություններ, որոնք իրենց մեջ ընդգրկում էին սյունազարդ դահլիճներ, սկսել են կառուցել 6-րդ դարի վերջում, Բաբելոնում (ապադանա, որից քիչ բան է հասել մեզ)[16], Սուզայում (նույնպես ապադանա, որը հրդեհվել է ն. մ. թ.

---

[11] Տե՛ս Г. А. Меликишвили. „Урартские клинообразные надписи", ВДИ, 1953, № 4. արձանագրություն № 162.

[12] Բողազքյոյում, խեթական պետության մայրաքաղաքում, պեղումների շնորհիվ բացվել են 25 սյունանոց (5×5) սրահի հետքերը։ Տես R. Naumann. Bauwerke der hethitischen Grossreichzeit auf Buyuk-kale. Ausgrabungen der Deutschen Orient-Gesellschaft u. des Deutschen Archaeologischen Instituts. Abhandlungen der Deutschen Orient-Gesellschaft N 2. Bogazkoy III. Funde aus den Grabungen 1952—1955. Berlin, 1957. Շենք D, նկ. 4, 5 Այս XIV—XIII դարերի միակ հուշարձանը քիչ ուսանելի է։

[13] Persepolis I, ընդհանուր հատակագիծ.

[14] H. Frankfort. „The Art and Architecture of the Ancient Orient", 1954, նկ. 109. L. Vanden Berghe. Archéologie de l'Iran Ancien, Leiden, 1959; քարտեզ 1.

[15] Persepolis I, էջ. 40.

[16] R. Koldewey. „Das wiedererstehende Babylon". Leipzig. 1925. էջ. 126—127.

5-րդ դարի կեսերին)[17], Էկբատանայում (հնարավոր է ևս ապադանա)[18] և Եգիպտոսում՝ Թեբա քաղաքից ոչ հեռու (տաճար)[19]։

Դարեհի որդու և հաջորդի՝ Քսերքսեսի (Ն. մ. թ. 485—465) աշխատանքները Պերսեպոլիսում ավելի մեծ թափով ծավալվեցին։ Ավարտվեցին Դարեհի օրով սկսված շինությունները և միևնույն ժամանակ ձեռնամուխ եղան նոր օբյեկտների կառուցման, ինչպես օրինակ՝ Քսերքսեսի պալատը, այսպես



Նկ. 5. Պերսեպոլիս։ Ընդհանուր հատակագիծ (ըստ Շմիդտի)։

կոչված 100 սյունանոց դահլիճը, կանանոցը և վերակառուցվեց գանձատունը[20]։ Պերսեպոլիսի հարթակից ոչ շատ հեռու Քսերքսեսը կառուցեց ապադանայի տիպի մի շենք[21]։

Քսերքսեսի անմիջական հաջորդների կառուցումների մասին քիչ բան գիտենք։ Միայն Արտաքսերքսես 1-ի (465—423) մասին հայտնի է, որ նա Պերսեպոլիսում զբաղված է եղել շինարարական գործունեությամբ, որտեղ նա ավարտել է 100 սյունանոց դահլիճը[22]։ Շինարարական ծավալուն գործունեությամբ է զբաղված եղել Արտաքսերքսես 2-ը (404—358), որը Սուզայի

[17] H. Dieulafoy. „L'Acropole de Suse" Paris 1892, IV մաս. էջ 388.
[18] Persepolis I, էջ. 37.
[19] Նշվ. աշխ. էջ. 26—27.
[20] Նույնը, էջ 41—42.
[21] Նույնը, էջ 55, նկ. 14, 15, L. Vanden Berghe Նշվ. աշխ., էջ 37.
[22] Persepolis, I, էջ 43.

հրդեհված ապադանայի տեղում կառուցեց նորը[23]։ Նույնատիպ շենք, դատելով արձանագրություններից, նա կառուցել է Էկբատանայում[24]։ Սյունաղարդ դահլիճների վերջին կառուցողներից է, ըստ երևույթին, Արտաքսերքսես 3-ը (358—338), որին վերագրվում է մի պալատի կառուցումը Պերսեպոլիսում[25]։

Աքեմենյան սյունաղարդ դահլիճների այս թռուցիկ թվարկումը բոլորովին էլ սպառիչ չէ այնքանով, որքանով հաշվի էին առնված միայն թվագրված հուշարձանները։ Պերսեպոլիսից Աուղա տանող արքայական ճանապարհի վրա Ջին-ջինում կան սյունաղարդ փոքր տաղավարի մնացորդներ, որոնց աքեմենյան ծագումը ամեն մի կասկածից վեր է[26]։ Կան վերջապես գրավոր տեղեկություններ կայսրության տարբեր վայրերում պալատական շինությունների գոյության մասին, որոնցից, սակայն, հետքեր մեզ չեն հասել[27]։ Բացառված չէ, որ այս պալատների մի մասը իր մեջ էր ամփոփում նաև սյունաղարդ դահլիճներ։ Վերը շարադրված ակնարկը ավելի ակնառու դարձրեց սյունաղարդ դահլիճների ականավոր դերը աքեմենյան ճարտարապետության մեջ։ Ժամանակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանց մեծամասնությունը թվագրվում է 6-րդ դարի վերջով և 5-րդ դարի 1-ին կեսով։ Հետաքրքիր է նշել, որ կան սրահներ, որոնց սյուների քանակը և դասավորությունը համընկնում է Արին-բերդի սյունաղարդ դահլիճի նույնատիպ տարվյալների հետ։ Այսպես օրինակ, Պասարգադայի Կյուրոսի պալատի կենտրոնական սրահը ուներ սյուների հինգ շարք, ամեն մի շարքում 6-ական սյուն[28] (նկ. 6)։ Այդպիսին է նաև Պերսեպոլիսի դանձատան նո. 62 սենյակը (5×6 սյուներ)։ Պեդումները պարզեցին, որ դանձատան արևմտյան հատվածը, որի մեջ է գտնվում այս սենյակը, ձևավորվել է երեք վերակառուցումներից հետո և 480-ական թ. մոտերքը նո. 62 սենյակը ստացավ այն վերջնական տեսքը, որը մեզ է հասել[29] (նկ. 5)։ Աքեմենյան ժամանակաշրջանի սյունաղարդ դահլիճների այս լայնածավալ կոնտեքստում իր տեղն է գտնում նաև Արին-բերդի շենքը, որի վերջնական ձևավորումը համընկնում է վերը նշված ժամանակաշրջանի հետ։ Նախքան վերը հիշատակված անալոգիաների լույսի տակ նրա մի քանի մանրամասները քննության առարկա դարձնելը, հարկավոր է թռուցիկ կերպով կանգ առնել մի քանի հարցերի վրա՝ կապված սկզբնական շենքի հետ։ Այս, ուրարտական ժամանակում կառուցված շենքի հատակագիծը հիշեցնում է հին Արևելքում տարածում գտած Բիտ-հիլանիի ճարտարապետական կերպարը։ Այս տերմինի տակ ընդունված է հասկանալ մի կառույց, որը բաղկացած է գլխավոր, որպես կանոն երկարավուն սենյակից, սյունաշարքով մուտքի առջև. կողքերից տեղադրված են սենյակներ՝ հաճախ աշտարակաձև[30]։ Շենքի այս տեսակին հանդիպում ենք Ն. մ. թ. 2-րդ հազարամյակում, խուրի-միտանիական միջավայրում, որտեղից անցել է խեթերին և հատկապես տարածում

[23] M. Dieulafoy, Նշվ. աշխ. էջ 338, նկ. 221.
[24] L. Vanden Berghe, Նշվ. աշխ., էջ 109. M. Dieulafoy, Նշվ. աշխ., էջ 342, ծանոթ. № 2.
[25] Persopolis, I, էջ 43.
[26] L. Vanden Berghe, Նշվ. աշխ., էջ 80.
[27] Persepolis I, p. 39; A Survey of Persian Art, h. I, էջ 330—331.
[28] Տե՛ս H. Frankfort, Նշվ. աշխ., նկ. 109 (էջ 217).
[29] Persepolis I, նկ. 197, 200, նկ. 65, 66.
[30] Fr. Wachtsmuth. „Was ist ein Hilani, was ein bit hilani?" Zeitschrift der Deutschen Morgenlandischen Gesellschaft. Wiesbaden, 1958. Bd. 108, Heft 1, էջ 66—73

գտել 1-ին հազարամյակում, հյուսիսային Ասորիքի խեթական փոքր պետություններում։ Բիտ-հիլանին կարելի է հանդիպել նաև Ասորեստանում, ներքին բակի շուրջը դասավորվող սենյակներից բաղկացած շենքերի կողքին[31]։ Այդպիսով, Արին-բերդի Բիտ-հիլանին առնչվում է հին արևելյան նմանօրինակ կառույցների հետ։ Հետագայում, աքեմենյան ժամանակաշրջանում, սյունաշարը վերակառուցվում է սյուների երեք նոր շարքի ավելացման և



Նկ. 6. Պասարգադա։ Ընդհանուր հատակագիծ (ըստ Ֆրանկֆորտի)։

պատերի երկարացման եղանակով, և այդպիսով ստեղծվում է սյունազարդ դահլիճը[32]։

Այժմ տեսնենք չե՞ն հակասում արդյոք սյունազարդ դահլիճի, նրա շինարարական 2-րդ ժամանակաշրջանին վերաբերող մասերի մի քանի առանձնահատկությունները հետուրարտական, աքեմենյան ժամանակի ճարտարապետության սկզբունքներին։

Շինարարական երկրորդ փուլին վերաբերող պատի շարվածքի բնույթը հաջող կերպով ձայնակցում է աքեմենյան ժամանակաշրջանի շինարարական տեխնիկայի տվյալների հետ։ Ինչպես արդեն նշվել է, Արին-բերդում նա կազմված էր հիանալի մշակված վեմերի մի շարքից, որի վրա բարձրանում էր հում աղյուսից շարվածքը։ Քարի մշակման այդպիսի բարձր մակարդակի կարելի է հանդիպել նաև աքեմենյան կառույցներում, օրինակ Պերսեպոլիսում։ Քարե վեմերը այստեղ լավ տաշված են ու հաջող կերպով միացված իրար, առանց որևէ կապող նյութերի գործածության, բացի այն դեպքերից, երբ

[31] Նույն տեղում, էջ 69.

[32] Բիտ-հիլանիի տիպի շենքի վերափոխումը Արին-բերդում սյունազարդ դահլիճի, անկախ ժամանակից, երբ այն տեղի ունեցավ, հերքում է ամերիկացի ուսումնասիրող Ֆրանկֆորտի թերահավատ մոտեցումը ճարտարապետական այդ կարգի վերափոխումների նկատմամբ։ Տե՛ս „The Art and the Architecture of the Ancient Orient" 1954, էջ 264—265, ծանոթ. 56.

նրանք ամրացած են իրար երկաթե գամերով[33]։ Այդպիսի վեմեր են գործածել Պերսեպոլիսի ընդհանուր հարթակի (տերրասայի), առանձին պլատֆորմաների երեսպատման, ինչպես նաև այդպիսի բազմաթիվ շենքերի կառուցման ժամանակ։ Լավ աշված վեմերի մի շարքից են արված պատերի ներքևի մասերը։ Նրանց վրա բարձրանում էր չթրծված աղյուսի շարվածքը։ Այս զուգորդումը լավ աշված վեմերից կազմված ցածր ներքնաշարի չթրծված աղյուսե պատի հետ՝ Պերսեպոլիսի շինարարական տեխնիկայի բնորոշ գծերից է։

Ինչպես արդեն նշվել է, շինարարական 2-րդ էտապին վերագրվող պատը դրսից հարդարված է կոնտրֆորսներով, որոնք մի շարք առանձնահատկություններով տարբերվում են սկզբնական շենքի կոնտրֆորսներից։ Պատի արտաքին երեսը ելուստներով ամրապնդելու և աշխուժացնելու հին Արևելյան սովորությունը լայն կիրառություն գտավ աքեմենյան ճարտարապետության մեջ։ Արին-բերդի կոնտրֆորսներն են հիշեցնում Պերսեպոլիսի գանձատան արտաքին պատերի վրա եղած ելուստները, որոնք այստեղ հանդես են գալիս[35] խորշերի զուգակցությամբ։ Հետաքրքիր է նշել, որ նրանց չափերը տեղ առ տեղ հանդիպում են Արին-բերդի կոնտրֆորսների չափերի հետ (2.90 մ.)[36]։

Արին-բերդի սյունադարդ դահլիճում գոյություն ունեցող նստարանը նույնպես չի հակասում աքեմենյան ժամանակաշրջանի շինություններում տիրող ընդհանուր դրությանը։ Պերսեպոլիսի կառույցներում հաղվագյուտ երևույթ չեն պատերի երկայնքով ձգվող ցածր նստարանները. այդպիսիներին կարելի է հանդիպել, այսպես կոչված Քսերքսեսի դարբասի ներսում, Դարեհի պալատում, խորհրդակցությունների սրահում, գանձատան 99 սյունանոց սրահում[37]։ Նմանօրինակ նստարանների կարելի է հանդիպել նաև աքեմենյան ճարտարապետության վաղ հուշարձաններում, օրինակ Պասարգադայի Կյուրոսի պալատի արտաքին սյունաշարում (պորտիկում)[38]։

Արին-բերդի սյունադարդ դահլիճի նշանակվածությունը հստակությամբ որոշելու համար բացակայում են մի շարք լրացուցիչ կարևոր տվյալներ՝ արձանագրություններ, գրավոր տեղեկություններ։ Այդպիսի բնորոշման բարդությունը հասկանալի կդառնա, եթե հաշվի առնենք, որ մինչ այժմ ուսումնասիրողները Պերսեպոլիսի մի շարք շենքերի վերաբերյալ չեն հանգել ընդհանուր եզրակացության։ Այնինչ Պերսեպոլիսում հաճախ հանդիպում ենք կառուցող թագավորների արձանագրությունների կամ բարձրաքանդակների, որոնք բացահայտում են իրենց հարդարած կառույցի դերը։ Օրինակների մի ամբողջ շարք ցույց է տալիս, թե որքան բազմազան կարող են լինել կարծիքները հանրահայտ և երբեմն կարծեցյալ հստակորեն բնորոշվող շենքերի դերի մասին։ 100 սյունանոց հանրահայտ սրահը Պերսեպոլիսի պեղումների ղեկավարի կողմից համարվում էր ընդունարան։ Հետագայում նա

---

[33] Persepolis, I. էջ 61, 64.

[34] Խորհրդակցությունների սրահում, նշվ. աշխ. էջ 116; Դարեհի պալատում, էջ 222, 227, նկ. 91, տախտ. 128 A; կանանոցում, էջ 257, տախտ. 191 A. Քսերքսեսի պալատում, տախտ. 174 A, 176 B., 179, պալատ G.-ում, նկ. 118 B.

[35] Նույն տեղ, նկ. 69, 74.

[36] Նույն տեղ, էջ 158.

[37] Նշվ. աշխ. նկ. 25, 26, 30, 40 D. 45 C., 51, 51, 56 D, էջ 80, 111, 178.

[38] Frankfort, նշվ. աշխ. էջ 217.

փոխեց իր տեսակետը և առաջարկեց այս կառույցը դիտել որպես արքունական թանգարան, որտեղ ցուցադրվում են թագավորին ընծայված նվերները[39]։ Մի ուրիշ ուսումնասիրողի ավելի նպատակահարմար թվաց համարել այս սրահը արքայից-արքայի զորքերի հավաքույթի վայր[40]։ Երրորդ ուսումնասիրողը հակված էր կարծելու, որ սրահը իրենից ներկայացնում է կրակի պաշտամունքի տաճար[41]։ Մինչև այժմ վիճելի են այսպես կոչված խորհրդակցությունների սրահի և նույնիսկ Դարեհի և Խսերքսեսի պալատների դերերը։

Ելնելով այն հանգամանքից, որ սա բերդի տերիտորիայում միակ սրահն է և այն էլ այսպիսի հսկայական չափերի, որին սյունաշարերը հանդիսավորության երանգ էին հաղորդում, մենք հակված ենք տեսնելու նրա մեջ ընդունասրահ, խորհրդակցությունների և հանդիսավոր ժողովների մի վայր։ Մնացած սենյակները, որոնք հարում էին սյունազարդ դահլիճին, կարող էին ծառայել որպես բնակելի սենյակներ։

Արին-բերդում այդպիսի շենքի առկայությունը, որը ուներ ընդունասրահի և նստավայրի բնույթ, բնականաբար հարց է առաջացնում հետուրարտական ժամանակաշրջանում բերդի դերի մասին։ Ն. մ. թ. 6—4-րդ դարերի պատմական միջավայրում, ուր մեզ տանում են շենքի հատակագծի ու վերակառուցված հատվածի առանձնահատկությունները, ինչպես նաև հնագիտական այլ կարգի նյութերը, գայթակղեցուցիչ է սատրապի նստավայրերից մեկը տեսնել Արին-բերդի միջնաբերդում[42]։ Հայկական լեռնաշխարհի և նրա հարակից շրջանների սատրապային նստավայրերի մասին եղած գրավոր տեղեկությունները բավականին աղոտ են, իսկ հնագիտական հետախուզությունները, որոնք պետք է պարզություն մտցնեն այս հարցում, նոր-նոր են ծավալվում[43]։ Միակ հեղինակը, որը մեզ տեղեկություն է թողել այս հարցի մասին, Քսենոփոնն է։ Նրա թողած հունական զորքի նահանջի նկարագրությունից իմանում ենք, որ Արմենիա սատրապության հարավային սահմանը՝ կենտրիտես գետը անցնելուց հետո, հունական զորքը հասնում է մի մեծ գյուղի, որտեղ կար պալատ սատրապի համար („βασίλειον τῷ σατράπῃ“) «Անաբազիս» IV, 4; 2)։ Շարունակելով իրենց ճանապարհը, հույները մտնում են Արևմտյան Արմենիայի տերիտորիան ու հասնում մի երկրորդ պալատի, նույնպես «βασίλειον», որը շրջապատված էր գյուղերով («Անաբազիս» IV, 4; 7)։ Այսպիսով, մենք տեսնում ենք, որ Քսենոփոնը թողել է տեղեկություններ Հայկական լեռնաշխարհում երկու պալատների գոյության մասին, որոնք նախատեսված էին, ըստ երևույթին, որպես սատրապի նստավայրեր[44]։ Այս տեղեկությունների ճիշտ մեկնաբանման համար պետք է հաշվի առնել Ն. մ. թ. 5-րդ

---

[39] Persepolis I, էջ 42, 129.

[40] A. Godard. „Les travaux de Persepolis“. Archaeologica Orientalia. In memoriam Ernst Herzfeld. New York, 1952, էջ 126: R. Ghirshman „Notes Iraniennes. VII. Apropos de Persepolis, Artibus Asiae, XX, 4, 1957, էջ 205.

[41] R. de Mecquenem, L. Breton et M. Rutten, Նշվ. աշխ. էջ 41.

[42] Գ. Ա. Տիրացյան, «Երվանդունիները Հայաստանում», ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (Հասարակական գիտություններ) 1958, № 6 էջ 60։

[43] Ժամանակակից Ղազախ քաղաքի մոտակայքում, Սարը-Թեփե կոչված բլուրում տարվող հնագիտական աշխատանքները (տես. Ի. Նարիմանով), ինչպես մեզ թվում է, նույնպես սատրապային նստավայրի հետքեր են ի հայտ բերում։

[44] Քսենոփոնի մի անորոշ վկայությունը (IV, 5: 10) դուցե որևէ առնչություն ունի այդ կարգի կենտրոնների հետ։

դարի վերջի վարչական բաժանումը Հայաստանում։ Ծենոփոնը մեզ հաղորդում է երկու Արմենիաների գոյության մասին, մեկը «ընդարձակ և բարեկեցիկ», որն անվանում է պարզապես «Արմենիա» և որի կառավարիչն է Օրոնտեսը, և մյուսը՝ «Արևմտյան Արմենիա», որի կառավարիչն էր Տիրիբազը։ Ինչպես արդեն տեսանք, Օրոնտեսի Արմենիայում սատրապի աթոռանիստը հանդիսանում էր պալատով գյուղը։ Այնքանով, որքանով բոլոր հիմքերը կան պնդելու, որ Արմենիա սատրապությունը իր մեջ էր ընդգրկում Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ շրջանները (իզուր չէ, որ Ծենոփոնը այն անվանում է ընդարձակ), ապա դժվար է հաշտվել այն մտքի հետ, որ սա սատրապի միակ աթոռանիստն է։ Բեռ ավելին, նրա տեղադրումը սատրապության ամենահարավում, ոչ հեռու սահմանից, կենտրիտեսից արևմտյան Տիգրիսի ակունքները տանող ճանապարհի վրա, էլ ավելի հավանական է դարձնում ենթադրությունը, գոնե ևս մեկ գլխավոր աթոռանիստի գոյության մասին, որը կհանդիսանար սատրապության վարչական կենտրոնը։ Որպես այդպիսիք Աքեմենյանները ընտրում էին անցյալում առաջնակարգ դեր խաղացած կենտրոնները, քաղաքները։ Շատ հնարավոր է, որ նրանց ընտրությունը կանգ առած լինի նախկին ուրարտական պետության հին մայրաքաղաք Վանի և նրա միջնաբերդի վրա։ Այսպիսի ենթադրության օգտին խոսում է Վանա ժայռի վրա դրոշմված Դսերքսես 1-ի (485—465) եռալեզու արձանագրությունը։ Այդ արձանագրության մեջ թագավորը հաղորդում է այն մասին, որ իր հայրը՝ և նախորդը՝ Դարեհը հրամայեց տեղ պատրաստել արձանագրության համար, և որ ինքը՝ Դսերքսեսը դրոշմեց այն մեծարելով հոր և իր սեփական կառույցները[45]։ Բնական է, որ այդպիսի արձանագրության տեղադրման հարմարավետ վայր կարող էր լինել սատրապության կենտրոնը, որպիսին հանդիսանում էր Վանը։

Ինչ վերաբերում է երկրորդ պալատին, որին հույները հանդիպեցին, բայց արդեն «Արևմտյան Արմենիայի» տերիտորիայում, ապա անկախ երկրի կառավարիչ Տիրիբազի իրական դրությունից (Ծենոփոնը նրան անվանում է ոչ թե սատրապ այլ հյուսարքոս), ինչպես նաև անկախ այս՝ «Արևմտյան Արմենիայի» և «Արմենիա» սատրապության փոխհարաբերություններից, նա պետք է հաշվի առնվի ն. մ. թ. 5—4-րդ դարերի շեմքին Հայկական լեռնաշխարհի սատրապային կենտրոնները քննության առարկա դարձնելիս։ Այն պատկերը, որը մեզ ներկայացնում է Ծենոփոնը, շատ ընդհանուր ձևով է ծանոթացնում մեզ Հայաստանի վարչական բաժանման հետ։ Ինչպես հայտնի է, գոյություն ունի նաև այլ ավելի վաղ բաժնում, որը ինչպես մեզ թվում է, կարող է օժանդակել այլ կենտրոնների բացահայտման և իմաստավորման գործին։ Հայտնի է, որ մինչև Աքեմենյան իշխանության հաստատումը, Հայկական լեռնաշխարհում գոյություն ուներ Հայկական թագավորություն՝ մի միասնական տերիտորիայով, որը մի կողմից սահմանակից էր Մարաստանի հետ, մյուս կողմից Խալդայական ցեղերի հետ։ Այս տեղեկությունները, որոնք վերցված են Ծենոփոնի «Կյուրոպեդիայից», մատնանշում են, որ լեռնաշ-

[45] F. H. Weissbach, Die Keilinschriften der Achaemeniden, „Leipzig, 1911, էջ 116—119.

[46] И. М. Дьяконов, История Мидии", 1956 М. Л., էջ 355 և Գ. Տիրացյան, նշվ. աշխ. էջ 60։

խարհի կենտրոնական շրջանները մտնում էին այս թագավորության սահմանների մեջ այնքանով, որքանով մի սահմանը Մարաստանի հետ անցնում էր Վանա և Ուրմիո լճերի միջև ընկած տերիտորիայով, իսկ մյուսը՝ Խալդայների հետ, տեղադրվում է Փոքր և Բարձր Հայքի լեռներում[16]: Այն բանի մասին, որ Ն. մ. թ. 6-րդ դարը հայկական թագավորությունը հիմնականում զբաղեցնում էր նախկին ուրարտական պետության տերիտորիան, խոսում են աքեմենյան արձանագրությունները, որոնց մեջ միշտ հավասարության նշան է անցկացվում Հայաստանի և Ուրարտուի միջև: Աքեմենյան իշխանության հաստատումը Հայկական լեռնաշխարհում, սկզբում հավանաբար փոփոխություններ չմտցրեց երկրի վարչական բաժանման մեջ: Կյուրոսի ժամանակ Հայաստանը, Մարաստանը և Կադուսիացիների երկիրը գտնվում էին մի սատրապի՝ Թանաոքսարեսի իշխանության տակ («Կյուրոպեդիա», VIII, 7; 11): Դարեհի օրոք, ապստամբության ճնշումից հետո, Հայաստանը նորից դարձավ առանձին մի միավոր, ինչպես այդ մասին վկայում են սեպագիր արձանագրությունները (Բեհիստունի, Պերսեպոլիսի, Նաքշի Ռուստեմի): Հերոդոտի տեղեկությունները Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում սատրապային բաժանման մասին նոր հետաքրքիր հարցեր են դնում: Ըստ Հերոդոտի հանրահայտ տեղեկության, Դարեհի օրոք հաստատվեց կայսրության նոր բաժանում, որի հետևանքով Հայկական լեռնաշխարհում հանդես եկան երկու սատրապություններ՝ 13-րդը, որը ընդգրկում էր «Պակտիկան, Արմենիան և նրա հարևանները՝ մինչև ծով» և 18-րդը, որի մեջ մտնում էին «ալարոդները, սասպեյրները և մատիենները» (III, 94): Դարեհի ռեֆորմի թվագրման հարցը, ինչպես նաև այն հարցը՝ արտացոլում են արդյոք Հերոդոտի տվյալները այս ռեֆորմի էությունը, թե նրան՝ Հերոդոտին ժամանակակից դրությունը, չի կարելի վերջնականապես լուծված համարել: Համաձայն Լեման-Հաուպտի և ուրիշ ուսումնասիրողների, Հերոդոտի մոտ բերված Դարեհի սատրապությունների ցուցակը Հեկատեոսից է վերցված և հետևաբար վերագրվում է նախքան մեր թվականության 500-ական թվերին[17]: Այս տեսակետին հակադրվեց Օ. Լոյցեն: Նա փորձում է ապացուցել, որ նախ Հեկատեոսը չէր կարող որպես աղբյուր ծառայած լինել սատրապությունների ցուցակի հարցում[18], և ապա նա հնարավոր է համարում, որ ցուցակը կազմված է անմիջականորեն Հերոդոտի կողմից, որին մատչելի էին սատրապությունների արխիվային նյութերը. դրա հետևանքով էլ ցուցակը կարող է արտացոլած լինել նրա ապրած ժամանակի սատրապությունների դրությունը (մոտավորապես Ն. մ. թ. 450 թ.)[19]: Եթե 13-րդ սատրապությունը ընդգրկում էր նախկին Հայկական թագավորության հողերը, ապա 18-րդ սատրապությունը ընդունված է տեղադրել Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջաններում: Այդ մասին են ակնարկում Հերոդոտի տեղեկությունները այս սատրապության կազմի մեջ մտնող առանձին ցեղերի տեղադրման մասին: Ասպեյրները, հավանաբար, ապրում էին Քուռի և Արաքսի հովիտների շրջանում: Նրանք

[17] C. F. Lehmann-Haupt. „Satrap". Paulys Realencyclopadie der klassischen Altertumswissenschaft. Zweite Reihe Bd. II, էջ 106; И. М. Дьяконов նշվ. աշխ. էջ 340, 343.

[18] O. Leuze. Die Satrapieneinteilung in Syrien und im Zweistromlande. Halle 1935 էջ 81—82.

[19] Նշվ. աշխ. էջ 81.

մի կողմից սահմանակից էին Կոլխերի հետ, իսկ մյուս կողմից՝ մարերի (I, 103—106, IV, 37)։ Ալառոդները ուրարտական նախկին ցեղերը, մղվել էին դեպի Վանա լճի հյուսիս-արևելյան շրջանները։ Երերքսեսի հունական արշավի կապակցությամբ նրանք հիշվում են սասպեյրների հետ մեկտեղ (VII, 62)։ Երկու շատ հստակ տեղեկությունների հիման վրա մատիենները տեղադրվում են Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելյան շրջանում, Ուրմիո լճից դեպի արևմուտք (V, 49, V, 52)։ Պետք է հավանական համարել այն կարծիքը, որ 18-րդ սատրապությունը կազմվել է Դարեհի օրոք։ Առանձնացվել է նա արդյոք ուրիշ սատրապությունների տերիտորիայից՝ օրինակ 13-րդից, թե ստեղծվել է նոր նվաճված տերիտորիայի վրա, դժվար է ասել։ Ընդհանրապես դժվար է որոշակի բան ասել աքեմենյան ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի արևելքից հարող տերիտորիաների ճակատագրի մասին։ Մարաստանի պատմության մասին ունեցած տվյալները, ինչպես նաև Հերոդոտի տեղեկությունները, ակնարկում են այն մասին, որ Արևելյան Անդրկովկասի մի մասը մտնում էր մարական պետության և ապա սատրապության կազմի մեջ[50]։ Ամենաարևելյան շրջանները, Կասպիականի ափը, ըստ երևույթին, մտնում էին 11-րդ սատրապության կազմի մեջ[51]։ Երբ ստեղծվեց 18-րդ սատրապությունը, ապա նրան անցած պետք է լինեն Մարական սատրապության հատվածները, որոնք գտնվում էին Մատիենների երկրում, հետո Հայկական սատրապության մասերը, ապա նոր նվաճված տերիտորիաները (եթե այդպիսիք գոյություն են ունեցել)։ Վարչական նոր միավորի ստեղծելու կապակցությամբ անհրաժեշտ եղավ որոշել նաև նրա կենտրոնները։ Նրանցից մեկը, ըստ երևույթին, դարձավ նախկին ուրարտական քաղաք Էրեբունիի միջնաբերդը։ Պատահական չէ, որ ընտրությունը կանգ առավ այս վայրի վրա։ Ուրարտական ժամանակաշրջանում Էրեբունին կարևոր դեր էր խաղում պետության արևելյան շրջաններում։ Սա առաջին ուրարտական վարչական կենտրոնն էր Արարատյան դաշտում, որովհետև նա հիմնադրված էր Արգիշտիխինիլիից առաջ[52]։ Դրան պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ սա գերազանցապես ռազմա-ստրատեգիական կենտրոն էր, ի տարբերություն Արգիշտիխինիլիի, որի կյանքում գերակշռում էր տնտեսական կողմը[53]։ Բնական է, որ աքեմենյան ժամանակաշրջանում միջնաբերդը վերականգնեց իր կյանքը։ Նա գտնվում էր Արարատյան դաշտի կենտրոնում, որը, ըստ երևույթին, 18-րդ սատրապության տնտեսական գլխավոր շրջանն էր և վաղուց իվեր հռչակավոր էր իր բարձր զարգացած գյուղատնտեսությամբ։ Ամրոցի մոտակայքից սկիզբ էր առնում այն ճանապարհը, որը Արաքսի հովտից տանում էր Սևանա լճի

---

[50] И. М. Дьяконов, նշվ. աշխ. էջ 339—340.

[51] К. В. Тревер, Очерки по истории и культуре Кавказской Албании, М—Л, 1959, էջ 50 և հաջորդ։

[52] Г. А Меликишвили. Рецензия на: Б. Б. Пиотровский. „Кармир-Блур", В. Д. И., 1953, № 3, 112; И. М. Лосева, „Раскопки урартской крепости города Ирпуни (Ерепуни) на холме Арин-берд. Советское Востоковедение, 1955, № 3, էջ 145։ Մ. Իսրաելյան, նշվ. աշխ. էջ 100, ծանոթ. 2։ Ն. Վ. Հարությունյան «Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը», Պատմա-բանասիրական հանդես 1959 նոր. 2—3, էջ, 91—92 ծանոթություն 6։

[53] Նույն աշխատությունները։

վազանը և ավելի հեռու՝ Քուռ գետի հովիտը[54]։ Նորաստեղծ կենտրոնը ուրարտացիներից ժառանգել էր ամրոցային մի ամբողջական շինություն, պարըսպապատերով, զանազան շենքերով և այլն։

Արին-բերդում սատրապային կենտրոնի հիմնադրման ժամանակը որոշելու համար մեծ նշանակություն ունի 18-րդ սատրապության ստեղծման ժամանակի հարցը։ Ինչպես մենք արդեն տեսանք, այս սատրապությունը կարող էր ստեղծված լինել Ն. մ. թ. 450 թ.-ից շուտ։ Շատ հավանական է հետևաբար, որ արդեն 5-րդ դարի առաջին կեսին Արին-բերդը դարձել էր 18-րդ սատրապության վարչական կենտրոններից մեկը։ Այն գործունեությունը, որը Քսերքսեսը ծավալել էր Վանի միջնաբերդում, ապա Արին-բերդում կատարված մի քանի գյուտերը (479 թ. հետո կտրված միլետյան դրամները), թույլ են տալիս ենթադրելու, որ նախկին ուրարտական կենտրոնի յուրացումը և 30 սյունանոց սրահի վերջնական ձևավորումը կարելի կլինի վերագրել Քսերքսեսի թագավորության տարիներին (485—465)[55]։ Ն. մ. թ. 5-րդ դարի 2-րդ կեսում Հայկական լեռնաշխարհի վարչական բաժանման մեջ մտցվեցին փոփոխություններ, որոնք, ինչպես արդեն տեսանք, ֆիքսացիայի են ենթարկվել 5-րդ դարի վերջին՝ Քսենոփոնի կողմից։ Ըստ երևույթին 18-րդ սատրապությունը վերացվեց, նրա մի մասը մտավ Արմենիայի ընդհանուր սատրապության մեջ, մի ուրիշ մաս անցավ մարական սատրապությանը (հավանական է մատիենական հողերը Ուրմիայի շրջանում), իսկ Անդրկովկասում գըտնվող մի քանի մասեր ընկան նույն Մարաստանի ազդեցության ոլորտի մեջ։ Նախքան մ. թ. 5-րդ դարի վերջը Արմենիա սատրապության կենտրոնը, ըստ երևույթին, շարունակում էր մնալ Վանը։ Մնացած կենտրոնները նույնպես պահպանեցին իրենց գոյությունը։ Ինչպես տեսանք, Քսենոփոնը հիշատակում է դրանցից երկուսի մասին։ Պետք է կարծել, որ նաև Արին-բերդը շարունակում էր գոյություն ունենալ նրանց հետ։

Г. А. Тирацян

Колонный зал на Арин-берде и вопрос о сатрапских центрах на Армянском нагорье

(Резюме)

Холм Арин-берд находится на юго—восточной окраине столицы Советской Армении Еревана, и представляет собой цитадель основанного в первой половине VIII в. до н. э. урартского города Еребуни. Наряду с обильными археологическими материалами урартского вре-

---

[54] Այս ճանապարհի վրա, ժամանակակից Ղաղախ քաղաքի մոտակայքում, գտնվում էր սատրապի ամրոցանիստ մի այլ կենտրոն։

[55] Սյունազարդ դահլիճի ճարտարապետական կերպարի հետ մուտք գործեց նաև apadāna -ապարանք տերմինը։ (Տես Հ. Աճառյան. Արմատական բառարան, հ. 1)։ Զուգահեռաբար մուտք գործեց պալատ նշանակությունն ունեցող մի այլ տերմին-tacara-տաճար՝ որը, ինչպես մատնանշում է ակադ. Հ. Ա. Օրբելին, իր պաշտամունքային իմաստի կողքին գրաբարում պահպանել է նաև սկզբնական, քաղաքացիական, թագավորական պալատի իմաստը։ (Տես Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, կ. Պոլիս, 1852, էջ 331—333)։

мени были выявлены данные, относящиеся к послеурартскому периоду (VI—IV вв.). Среди последних особое место занимает раскрытый на территории крепости колонный зал. Археологические наблюдения позволяют утверждать, что названное сооружение было построено в два приема: первоначальное здание типа бит-хилани возникло в урартский период; оформление тридцатиколонного зала относится к ахеменидскому времени. Это сооружение имеет определенное сходство с колонными залами многих центров ахеменидской империи. Особенно близкие аналогии (число колон—30 и их растановка—5×6) представляют центральный зал дворца Р в Пасаргадах и помещение № 62 сокровищницы на персепольской террасе.

Рассматриваемое сооружение было, возможно, залом приемов сатрапа, а крепость Арин-берд—одним из центров XVIII сатрапии, возникшей до 450 г. до н. э.

•

G. A. Tiratzian

The Hall of Columns at Arin-Berd and the problem of the Satrap centres in the Armenian Highland

Summary

The hill of Arin-Berd is on the southeastern outskirts of Yerevan, the capital of Soviet Armenia and was the citadel of the Urartian city of Erebuny, founded in the first part of VIII c. B. C. Data have been exposed concerning the posturartian period (VI—IV cc. B. C.) together with an abundant archaeological material of Urartian time. Among this data the hall of columns disclosed on the fortress territory occupies a special place. Archaeological observations allow us to state that the abovementioned structure has been built up in two stages—the primary bit-hilani type building came into being during the Urartian period and was built up into a thirty columns hall in the Achaemenid time. This structure has a definite likeness to the halls of columns at many centres of the Achaemenid empire. The central hall of the palace P at Pasargadae and room No 62 of the treasury on the Persepolis terrace manifest especially close analogy (the number of the columns—30 and their arrangement—5×6). It may be that the structure under consideration was the reception hall of the satrap and the fortress Arin-Berd was one of the centres of the XVIII satrapy which came into being before 450 B. C.